


8900

~~3714~~



~~3714~~

~~5236~~

151.

5931



ՊՐՈՓ. Գ. ՄԱՐԿԻՆՍԿԻ.

Համար 27 հունիսի 1905 թ.

8900

Կարգված է

1905 թ. 24

ՄԱՐԻՈՍԻ ՅԱՂԹԱՆԱԿԸ

6000

*Արք.*

ՊԱՏՄԱԿԱՆ ԶՐՈՅՑ



Թարգ. ոստերեհից  
„ԱՐԱՏԱՐ“

*Կ*



Հրատարակից

Մ. ԽԱՉԱՏՐԵԱՆԻ

Տպարան „ՇԻՐԱԿ“ Ալեխանդրապոլ.

1905

(35)





# Մ Ա Ր Ի Ո Ս Ի Յ Ա Ղ Թ Ա Ն Ա Կ Ը

(Պատմական արարեսկ)

Ա.

## Մ Ա Ր Ի Ո Ս Ը Կ Ա Ր Թ Ա Գ Ի Ն Ա Յ Ի Ա Ե Ի Ե Բ Ե Կ Ն Ե Բ Ի Ո Ւ Մ

Աֆրիկայի կիզիչ արեգակի տակ, նախկին հր-  
գոր Գարթագենիայի պարսպի աւերակների բե-  
կորներից մէկի վերայ, նստել էր մի կռացած  
ծերունի և իւր անմիտ հայեացքով դիտում էր իւր  
առաջը տարածուած ծովի այն կողմը, որտեղ  
հեռու շատ հեռու, ուր հորիզոնը իւր անհուն  
հեռաւորութեան և խորհրդաւոր վարագոյրի  
տակ պահել էր չուժը, որը մի ժամանակ իրեն  
էր պատկանում:

Խղճալի ցնցոտիները ծածկել էին երբեմն հր-  
գոր, բայց այժմ քայքայուած մարմինը: Նրա հիւ-  
պատոտական ծիրանի ըզամպից կեղտոտ ու ցե-

Дозв. Цензурю Тифлисъ 20 Ноября 1905 года.



խոտ ձորձեր էին միայն երևում. փոշով, կեղտով ծածկուած, արևի տապից այրուած ու ճարճարուած սոճներին կպել էին պատառուտած սանդղակները, որի կտրտուած կապերն էին միայն երևում: Այս խորհրդաւոր ծերունու բոլորովին բաց, ճաղատ գլուխը այրուած էր նումինդեան կէսօրեայ բոցոտ արևից:

— Այրիք, այրիք, բոցոտիր երկիրը, սվ Կուգուրդի և Աննիրալի արև... մրթմրթում էր ինքն իրեն ծերունին— սակայն անդօր են քո ճառագայթները, նրանք անկարող են ներգործելու իմ կրակ դարձած գլխին, որք աւելի հրաշէկ է քան քո անդօր ճառագայթները: Ծերունու մարմինը գիտէի էր նմանում, բայց աշքերում այնպիսի եռանդ, այնպիսի կեանք էր նկատուած, որ սարսափ էր ազգում նայողի վերայ:

— չք՛մ, Տիգրանը, — vir armenus!, Armeniae rex! <sup>1)</sup> մրթմրթում էր ծերունին: — Այո, նա, նա խից չսամից ամբողջ Ասիան, Եգիպտոսից Պեկիզումիայից <sup>2)</sup> ամբողջ mare Infernum-ը <sup>3)</sup> ամբողջ Pontus Euxinus-ը <sup>4)</sup> մինչև Մէօպիտանի մինչև Պանտիկապոնոսի թագաւորութիւնը: <sup>5)</sup>

Տ. թ. 1) Հայ մարդը, Հայոց արքան: 2) Մի կրկին, որ գտնուած էր Սուէզի պարանոցի մօտ: 3) Այժմեան Յոնիական ծովը: 4) Սև ծովը: 5) Այժմեան Դրիմ թերակղզին և Եգիպտոսի ծովը:

Անմիաբ լռեց: Կարծես լուսնի ակառօջ էր գնում ծովի վրայից լուսող ձկնկուլների լողճալի ձայներին:

— Տիգրանն ու Միհրդատը կամենում են խլել իմ Հսոմը, Հսոմայ պետութիւնը...

Ծերունին ուղղուեց և սաի հարուածով շարժեց աւերակների բարերից մէկը: Քարը գլորուեց և նրա տակից դուրս սողաց մի գորշ օձ, և ֆշշալով պահուեց աւերակների ծակերից մէկում:

— Օ՛, Սուլթան... Եժի ծնունդ, իմ կրծքիս վերայ տաքացած թժ, չնորհակալութեան փոխարէն էր, որ խայթեցիր ինձ մահացուցիչ թոյնով... Բայց ես դեռ կենդանի եմ, և րանի որ կենդանի եմ Հայաստանն ու Պանտոսը չեն կարող տիրել իմ Հսոմին:

Լռեց: — Ապա մի վայրի ճիշ արձակելով, գլուխը թոյլ կերպով կախ գցեց:

Սա Հսոմից արտօրուած Մարիոս աղբատն էր, որ նումինդեան վիրաւոր առիւծի նման, թափառում էր իւր ձեւերով աւերած Կարթագինայի ահարկու աւերակներում:

Մարիոսը խորը մտածմունքի մէջ ընկաւ և իւր կեանքը, արիւնայի շրջապատիկերի նման պատկերացաւ նրա երեակալութեան առաջ:



Եւ նրա միտքը, բայրայուած ուղեղի քմահա-  
 ճոյրով, պատերազմի արհաւիրքներէից տար-  
 ուեց յետ, գէպի անհոգ և ոսկեայ մանկու-  
 թիւնը... Փորրիկ, կիսամերկ Մարիտը իւր  
 հայրենի լուներեում արածայնում էր իւր մօր  
 միակ այծը... Նա իւր հօրը շէր յիշում... Մե-  
 ռաւ մայրը զրկանքի և կարօտութեան մէջ...  
 Մարիտը սկսեց երկրագործութեամբ պարա-  
 պել և ձեռք առաւ ուրիշի արօրը... Բայց սա-  
 րերի արժւի եռանդուն հողին ու միտք բաշ էր  
 տալիս նրան գէպի հեռու, գէպի անտեսանելի  
 Հոսմը... Խովն ու արօրը շկարագացան դսպել  
 լեռնային արծուիկին:

—Այն օտարի արօր... ես նրան դաշտի մէջ  
 թողի և Հոսմը ինձ հայրենի բնից հեռացած  
 արծուիկիս պահեց, խնամեց... Խովի ու ա-  
 րօրի փոխարէն ձեռս սուր ու նիզակ գրեց... և  
 ահա այդ սրով ու նիզակով Սկիպիօնի առաջ-  
 նորդութեամբ Կուզուրդի հետ թի թիկ,  
 նիզակ նիզակի տուած, հեռու Իսպանիա ար-  
 շաւեցինք և մեր նիզակներն ուժով տիրեցինք  
 Նումինցեային: Ապա տիրեցի նաև Հոսմին...  
 Հոսմ և ամբողջ աշխարհը խոնհարուեց յադ-  
 թական սրիս և ստիս տակ... Այսպիսով տէր դար-  
 ձայ ամբողջ աշխարհին ...Իսկ այժմ... այժմ...

Եւ խեղճը արտասուեց:  
 Նրա սաների տակ հանգարտ, ծփում էր ծո-  
 վը: Նրա ալիքները շափաւոր տարուբերում-  
 ները, կարծես թէ կորած Հոսմից գոյժ էին  
 բերում և ոչ նշան կամ կոշ:  
 Նա յիշեց նոյնպէս իւր նախկին ընկեր, Նու-  
 մինգիոյ հզօր արքայ և Հոսմի ռիսերիմ թշնա-  
 մի Կուզուրդին և իւր ոսկրոտ ձեռք սպառնա-  
 լից թափահարեց գէպի անտեսանելի Հոսմը:

—Օ՛, Կուզուրդ, Կուզուրդ, ես գեռ լսում եմ քո  
 ոսկեայ շղթաների տխուր շառաշխնը, որով ես՝  
 քո նախկին բնկերն ու բեզ յաղթուց Մարիտսս  
 շղթայել էի... Սակայն գարշելի Սուլթանն էր որ  
 բեզ, անապատի առիւծիգ խաբուութեամբ դուրս  
 բաշեց Մարիտինեայից, իսկ ես բեզ, անյաղթիգ  
 գերեցի... Ես, Հոսմի երիտասարդ հիւպատոսս  
 որ այժարածութիւնից և երկրագործութիւնից  
 էի հասել այս պաշտօնին, հպարտութեամբ յադ-  
 թական կառքով ներս մտայ Հոսմ և բեզ, սլ  
 բնկեր, արքայական հագուստով, գէնք ու զրա-  
 հով ու ոսկեայ շղթաներով, շղթայակապ ներս  
 բերի Հոսմ:

Ծերունին գառն և արհամարական կերպով  
 ժպտաց:

— Գարշելի է Մարիտը, գարշելի է ինչպէս ինքը.



համայն մարգիւլութիւնը... Օ, անմահ աստուածներ:

Բայց շուտով դուքս մզուեց այս անմիտ գլխից բոսփական ինքնագիտակցութիւնը, և ուշացած զղջումը տեղի տալով արիւնհալի յիշուցութիւններին:

— Ահա Քալլերը (նախկին Փրանսիոյ բնակիչները) մօտենում են Հուսմին: Եւ երկրորդ անգամ են յանձնում հիւպատոսութիւնը Մարիոսին: Միջնորդներից (պրօլիտարիատ) կազմած լէգէօնների գլուխը անցած ուղիղ հինգ տարի, առանց հիւպատոսական պաշտօնը թողնելու, խորտակում, փշրում էր Քալլերին և առանց ծերակոյտի թոյլտուութեամբ իւր սիլնրօր կօգարդների (զօրախմբին) Հուսմի ազատ քաղաքացիութեան իրաւունք տուեց: Ծերունին հպարտութեամբ ժպտաց:— Ծերակոյտը բողոքեց այս անիրաւացի վարմունքի դէմ, հա՛, հա՛, ինչ ծիծաղելի է:

— Սակայն ես պատասխանեցի. ,,Պատերազմի ազմուկի ու ժխտրի մէջ չեմ կարող լսել օրէնքի ձայնը“: Եւ յիմար ծերունին բարձր յրրըջաց: Աւերակները արձագանք տուին նրա ծիծաղին: Ծերունու կիսախեղազար ուղեղը, շարունակում էր րնթանալ նոյն ուղղութեամբ. նրան

թւում էր թէ Հուսմը, որին ինքը բարձրացրել էր անհատանելի բարձրութեան, գլորում է գարշելի Սուլլիոսի ստների տակ և իւր ,,սրբազան ճանապարհով“ via sacra, — ով Պապիտօլիա պիտի բարձրանան Հուսմի յազթօյնները, Տիգրանն ու Միհրդադը:

— Անկարելի է այդ, անկարելի... Վատագութեամբ գոռաց խելագարը. — Աւելի շուտ Օլիմպի գագաթից անմահ աստուածները կգլորուին նրանց ստների տակ քան թէ Հուսմը:

Եւ սղառնալից թափահարեց իւր խղճալի բունցքը դէպի արևելք, և փաթաթուցւում րզամտով, շարունակեց.

— Վիմլրներին և Տեատոներին յազթելը ձեր բանը չէ այլ Մարիոսինը, որ նրանց զիակները խտտի նման հնձեց և ամբողջ Ռաւդեան հովիտը արեամբ ողողեց... որս համար էլ Հուսմը վեցերորդ անգամ հիւպատոսութիւնը ինձ յանձնեց:

Ապա իւր ազան հայեացքը գարձրեց դէպի հիւսիս, դէպի անտեսանելի Հուսմը և շարունակեց.

— Ղյանձնէ նահ կօթերորդ անգամ, համարեայ գոռաց նա.

Միրիացի Սաբիլլան գուշակել է, որ ես



եօթն անգամ հիւպատոս պիտի, լինեն.—  
Եւ կլինեն էլ, երգուած հոմ Տարտագոսով:

Պարսպի աւերակների յետևից երևացին մի քանի ձիաւորներ: Տեսնելով սրանց, Մարիոսը վեհ կերպարանք ընդունեց, ուղղուեց և հզարտուժեամբ թղամզի մէջ փաթաճուելով, սպասական գրուժեամբ դիտում էր մօտեցողներին: Սրանք էին այնտեղի փոխ հիւպատոսի կողմից ուղարկուած, մի հարիւրապետ և երկու էլ ձիաւոր:

Մարիոսը լուռ, անշարժ, հատաքարեայ կուռքի նման սպասում էր նրանց:

— Ե՛յ, ծերուկ, թղաւեց հարիւրապետը կանգնեցնելով ձի Մարիոսի առաջը. փոխ հիւպատոսը հրամայում է որ անպատճառ հեռանաս այստեղերից:

Ծերուկն աչքերը փայլեցին մի այնպիսի կատաղութեամբ, որ ձիաւորները վախից յետ յետ գնացին, իսկ հարիւրապետի ձին ծառս ելաւ:

— Գնա, առա՛ տիրոջդ, որ տեսար Մարիոսին Պարթաւկնայի աւերակներում:

Մարիոս բառը կայծակի ազդեցութիւն ունեցաւ նրանց վերայ: Մարտափած, յետ դարձրին ձիերի գլուխները և սկսեցին փախչել այնպիսի արագութեամբ, կարծես ջաղուններից

հալածուելիս լինէին: Մարիոսի արևնայի փառքն ու անունը, տարածուել էր այն ժամանակուայ ամբողջ աշխարհում. սրանք էլ լսելով այդ սոսկայի անունը, փախչում էին սարսափած:

Նրանց հեռանալուց յետոյ, պարսպի աւերակների վրայով, որտեղից Հոսոմի արտորականը հրաշքի եօթներորդ հիւպատոսութեան էր սպասում, երեսց մի կլին, որը ըթիտակ մթմթըթմայով մօտենում էր Մարիոսին: Սահմանում էր ուրուականի. սպիտակ մազերի հիւսերը խառնի խառն դուրս թափուելով կեղտոտ գլխակապից տալիս էր նրան մումիայի կերպարանք: Մարիոսի նման սրա շորերն էլ բազկացած էին զընցոտիներից: Մի ձեռում սնէր կաւից երկայնավիզ աման իսկ միւսով, կեղտոտ շորով փաթաճած մի ինչ սր բան:

— Ողջո՛յն մեծափառ հիւպատոսիդ, շնջաց նա, ահա բերել հոմ քեզ համար Պարթաւկնայի սղջ մնացած որդիերանց ազրատիկ տուրքը: Սիրելլան ասել է նրանց, որ դու ապրում ես միայն այն յուսով, ես ապրում որ չուտով ապերախտ Հոսոմը արեան ծով գարձնես: Ապա տուեց իւր բերած կաւէ ամանը և մի բուռ ֆինիկ (արմաւ):



Ահա սա էր Սիրիացի Սարկլան, որը իսկապէս ճննդով Եզրիպտացի գնչուհի էր: Ծնուել էր Պերուզիմայում, որտեղ Ծովափնեայ Պիրացի աւազակներէց զօղցուելով, ծախուել էր Հոռմայեցի գերիավաճառներին, որ և Հոռմում մտաւ նշանաւոր Կուլիանների մօտ որպէս սարկուհի: Երիտասարդ Մարիոսը, որ արդէն մեծ հուշակ էր վայելում Իսպանիայում տարած յաղթութիւնների պատճառով, յաճախ այցելում էր Կուլիանների տունը, սրանց հետ և բարեկամացաւ վերջը, պսակուելով Կայսոս-Յուլիոսի զբոսեր հետ, այստեղ տեսաւ նա Սարկլաին և երբ իմացաւ որ նա գուշակել գիտէ, խնդրեց որ իւր բախտն էլ գուշակէ:

— Գու եօթն անգամ հիւպատոս պիտի լինես, նօթն անգամ պիտի Հոռմին հրամայես. գուշակեց Սարկլան:

Մարիոսը, որ մի ժամանակ այժ էր արածայնում, յոյս չունէր որ ինքը կարող է զինւորութիւնից այդպիսի բարձր պաշտօնի հասնել. բայց երբ Կուզուբդեան պատերազմի ժամանակ Հոռմի հիւպատոսութիւնը նրան յանձնեցին, հաւատաց Եզրիպտուհու գուշակութեանը, անուանեց իւր Սարկլան և այնուհետև շրաժանուեց նրանից, որը նոյն իսկ ուզեկցում էր իւր

բոլոր արիւնայի արշաւանքներին ու պատերազմներին: Նոյնիսկ այժմ, երբ փախել էր Հոռմից և բաղցամ բօրենու նման լծափառում Կարթագինայի աւերակներում, Եզրիպտուհին շքտից նրան և սղարմութիւն հաւարելով կերակրում էր Հոռմի նախկին տիրոջն ու հրամայողին, այն համոզուներով ներշնչուած, որ մօտ է եօթերորդ հիւպատոսութեան օրը:

Մարիոսը առնելով Եզրիպտուհու բերած ամանը, ազահութեամբ մօտեցրեց շքութիւններին և սկսեց ծծել միջի գինին: Մտէրման հետ կառավարութեան համար եղած երկարատե և անյաջող կռիւնները, այս վեց անգամ հիւպատոսութեան աստիճանի հասած մարդուն՝ Մարիոսին ստիպել էր արբեցողութեամբ պարսպել, որը և վերջապէս խաւարեցրեց նրա գիտակցութիւնը:

— Բոլորը մի անգամից մի խմիր, ասաց Եզրիպտուհին բռնելով նրա ձեռքը, շէմ ուղում որ մեռնիս, առանց եօթներորդ անգամ հիւպատոս լինելու:

— 21, կապրեմ, հաւատացած և բուռն գիտակցութեամբ պատասխանեց մտեռանդ ծերունին— Միհրգատն ու Տիգրանը սպասում են իմ սրիս:



Բ.

Մ Ե Թ Ը Ծ Յ Ը Ղ Թ Ո Ղ Ը

Իզուր չէր վախենում Մարիտը Տիգրանից և Միհրդատից, Հասմի այս երկու հօր հակառակորդներից:

Հայերը սկսած, պատմական վաղ ժամանակներից արևելքի բոլոր ազգերի ճակատագրական բախտի մէջ մեծ դեր են խաղացել: Այս ազգը իւր ընդունակութիւններով, ազգային ամուր կապերով, հոգու անդորրութեամբ և հաստատամտութեամբ շատ էր հուշակուած:

Այն ժամանակ, երբ սկսում է մեր զրոյցը, ամբողջ առաջաւոր Ասիան, Ասորիքը, Փիւնիկէն, Գիլիկեան Պերգամը,<sup>1)</sup> և Կովկասի մի մասը պատկանում էր Հայաստանին: Այս հարուստ և բազմամարդ երկիրներին տիրել էին Տիգրան Ա-ի նախնիքները և Արեմենեանները: Միհրդատը, այսպէս ասած, մի սուր յենել էր Պոնտոսի հարաւային ափի վերայ Սինոպի մօտ, իսկ միւսը, Մեծբլտայի և Պանտիկապեայի հիւսիսային անկիւնը: Իւր դուստրը կնութեան տուեց Տիգրանին, որը բազմել էր Արտաշատի սո-

Ծ. Թ. Փոքր Ասիոյ ամենաարևմտեան ծայրին մի քաղաք:

կեայ գահին, և շրջապատուել էր անհաւատալիհարստութեամբ ու անընկճելի ուժով, սա մէկն էր այն տիտաններից, որոնք աստուծոների գէմ են կռիւ մղում:

Հասակով հսկայ, Համարեայ գերմարդկային ուժով, բոլոր հելլեն գիտութիւնները իւրացրած, Միհրդատը, անսահման կարողութեան տէր լինելով, սովորել էր իւր ժամանակակից քսան և հինգ զանազան լեզուներ ու բարբառներ: Վարժեցրել էր մարմինը թոյների ներգործութեան, պատերապի մմէջ անընկճելի էր և անխոնջ: Միանալով իւր փեսայ Տիգրանի հետ, սարսափելի հակառակորդ էին ներկայացնում Հռոմին, որը մինչև այդ ժամանակը ոչ մի հաւասար տխոյեան չուէր:

Ահա թէ ում հետ էր երազում շափուել անմիտ Մարիտը:

Մարիլլայի գուշակութիւնը ուղիղ գուրս եկաւ: Մարիտը կօթներորդ անգամ ստացաւ հիւպատոսութեան պաշտօնը:

Գիկատտոր Յենան շուղենալով որ Հասմի իշխանութիւնը Մուլլոսի ձեռն անցնի, Ափրիկայի աւերակներից Հասմ հրաւիրեց Կարթագենայի թափառաշրջկին:

Ահա Մարիտը վերագառնում է: Սրա Հասմ



մաներու նման բան Հոռոմի հիմնարկութիւնից մինչև այդ օր դեռ չէր տեսել Իտալիան:

Առաջուայ պէս ցեխօտ, պատառօտուն շորերով, այժմ արդէն բոյսրովին բորիկ, զարհուրելի պառաւի ընկերակիցութեամբ նա Ազպեան ճանապարհով մօտեցաւ Հոռոմի պարսպի դրանը: Նրան ընդ առաջ էին դուրս եկել Յեննան, բարեհամբոյր Սերտերոսը, Կազարդների պլուխն անցած: Հոռոմի գանձապահը պատուական հագուստ և կառավարչական նշաններ էր բերել, սակայն Մարիոսը լուսթեամբ ձեռքի շարժումով յետ մղեց պատուական քղամիտը, սանդալներն ու պատուանշանները: Նա ցանկանում էր որ Հոռոմը և իւր Լէպեօնները տեսնեն թէ, ինչպէս է վերագառնում արսօրից, իրանց հպարտութիւնը, իրանց փառքն ու պարծանիքը, իրանց Մարիոսը, պատերազմի և յաղթութեանց աստուածը:

Այս բանը լսելով Հոռոմէացիք սարսափի մէջ ընկան. նրան ընդ առաջ պատուաւոր պատգամաւորութիւն ուղարկեցին, Հոռոմին խնայելու համար: Պատգամաւորները պատահեցին նրան բազարի պարիսպների մօտ:

— Յանուն անմահ աստուածների, խնայիր մեզ, ով մեծ հրամանատար ազաջում էին նրանք:

0068  
0068



Մարիոսը լուս էր:

Սերգերոսն ու Յեննան էլ սկսեցին անաշխատի հոռոմի համար:


— Մահ, մահ, ահա միակ խօսքը, որ սանեց նա ներս մանելով Հոռոմ:

Եւ մի բանի ամիս շարունակ մահն էր թագաւորում: Զբաւականաւիտով այդբան անմեղ արիւնից, անցաւ իւր կօզարտների պլուխը և սլացաւ Ասիա:

Մարիոսի արշաւանքի լուրը շուտով հասաւ հայոց երկրորդ մայրաքաղաքը՝ Երտաշատ:

Լրարեքը, ուղարկւած էր Սինուպի կառավարչի կողմից, որը կառավարում էր երկիրը Միհրդատի բացակայութեան ժամանակ, իսկ Միհրդատն իւր փեսայ Տիգրանի հետ, այդ ժամանակ զանոււժ էր Իւերիայի մայրաքաղաքում, վրաց Երտօք արքայի մօտ:

Այս լուրը կայծակահար արաւ Տիգրանի կնոջը, երկտասարդ Կալլիօպին: Նա շփտէր թէ իւր հայրն ու ամուսինը ինչու են վնասել Անտօրի մօտ. Տիգրանն ասել էր նրան որ զնում են վայրի ոչխար և փիթ որսալու, բայց նա դեռ կռտկածում էր, երբ մի օր նա պատահամբ լսեց որ զնում են Վրաստան Անտօրի մօտ, Ալլանայիների և Իվերացիների հետ դաշն







կապելու, քնդդէմ հռոմի:

Թագուհին հրամայեց իւր մօտ կանչել լրաբերին:

— Ի՞նչպէս իմացար Սինսպում, հռոմայեցոց գալը, հարցրեց նա:

— Մենք այդ լուրը լսեցինք մեր ձկնորսներից, որոնք գեղիին են որսում, պատասխանեց լրաբերը. — նրանք տեսել են հռոմէական զինւորներով լի արերիմներ (նաւիր):

— Թերևս լսել են որ Կողքիսում <sup>1)</sup> նոր «սեկեայ զեզմ» անսպառելի հարստութիւն են ստիկ է գանուել և գնում են այնտեղ:..

— Յուրէ ե... խնարհարար պատասխանեց լրաբերը, բայց ձկնորսները աւելի սարսափելի բաներ են պատմում:

— Ի՞նչ են պատմում.

— Պատմում են որ նաւի առաջի մասում, մի բարձր տեղ տեսել են նրանց առաջնորդին հիւպատոսական շորերով, խկազարի նման թափահարում է ձեռքը և ստակալի ձայնով բղաւում «ես Տիգրանին ու Միհրդատին, Կուկուրդի նման, սեկեայ շղթաներով, իմ յաղթական կտորի յետեից հռոմ պիտի տանիմ:

Կալլիսոպը թիչ էր մնում ուշաթմափուէր, բայց

<sup>1)</sup> Ե. Թ. Կողքիս, այժմեան Ռիօնի հովիտը:

նաժիշաները բռնեցին նրան:

— Էյ ուրիշ ինչ լուր կայ. հարցրեց թոյլ ձայնով:

— Չեմ կարող ասել տիրուհի, պատասխանեց երկշատութեամբ լրաբերը. գուցէ այդպէս է երկացիլ ձկնորսներին:

— Ի՞նչ բան է երկացել նրանց, ասո՛ւ ես պէտք է բոլորն իմանամ:

— Նրանք տեսել են, առաջնորդի մօտ, որը սպաննում է մեր հզօր արքաներին և թող աստուածները պահեն նրանց, այն նրա մօտ տեսիլն կանգնած մի ստակալի կինոջ ուրուական, ջազուի տեղ են գրել, այն տեսակ ջազուի, որ պիտները հէնց իրենք նկարում են իրանց դժոխային նկարներում:

Կալլիսոպը լինելով իւր գարու իսկական գաւաիր, հուատում էր ամեն տեսակ բեռալիան արարածներին, ջազաներին, Լեւոիդներին, Օլիմպի ու Տարտարոսի բնակիչներին. յուսահամ կերպով կտարատում էր ձեռքերը:

Օ՛, անմահ աստուածներ, խնայեցէր ամուսնուս ու հօրս... Ես կ'ըսեմ ձեզ, երկու հարիւր արջառ և անուշահատութեան լեռներ կը ծխեմ ձեր առաջ: Թագուհու մօտ եղովները կա-

1325  
215



մենում էին հանգստացնել և խսկոյն մարգիկ  
ուզարկեցին Վրաստան:

Այն ինչ Մարիտը իւր նաւատորմով կանգ  
էր առել Եւրասիական Պոնտոսի այն ափին, որ-  
տեղ երեք հարիւր տարի առաջ, Քսենոփոնը  
իւր զօրքով Պարսկաստանից վերադառնալու  
ժամանակ, անտառների և անապատների մէջ  
լծափառելուց յետոյ, առաջին անգամ ծով տես-  
նելով հրճուանքով գոռացին—«Thlasi! Thalassa!»  
(ծով):

Թագնելով նաւերը և տեղացիներէց, պաշտ-  
պանուելու համար բաւականին զօրք, Մարիտ-  
ը կօզարդների գլուխն անցած դիմեց դէպի  
երկրի խորքը, դէպի Արտաշատ: Գօզարտների  
հսկայ գրօշակակիր Սարմատացու առաջից գնում  
էր Մարիտը, ամբողջապէս սսկեայ զրահով և  
վհանով, փայլուն սագաւարդը գլխին: Նրան  
հաւատար գնում էր սե ձին հեծած, իւր ան-  
բաժան ուղեկցուհին Սարիլան քամուց ծա-  
ծանուդ սպիտակ հիւսերով, որ իւր տեսքով  
սարտափ էր ազգում նոյն իսկ Հռոմայեցոց վե-  
րայ: Տեղացի, Տաօխ <sup>1)</sup>, Մակրօն <sup>2)</sup>, բնակիչնե-

Ծ. Թ. 1) Տաօխ. Տայոց աշխարհը այժմեան Բասնի մօտերը:  
2) Մակրօն Տրապիզոնի և Մորոսի մէջ տեղ համէնի շրջա-  
կալը:

րը տեսնելով ծանրաբեռնուած կօզարտներին,  
Մարիտին իւր զարհուրելի ուղեկցուհուն, Հը-  
ռոմէական կատաղի զրահաւորների փայլուն  
սագաւարդներն ու նիզակները, սարտափից ե-  
րեխանների հետ ցածէին գլորում յեռներից  
և ջարդ ու փշուր լինում: Միմիայն Խալիբնե-  
րը <sup>1)</sup>, հայոց ամենամօտ հարեանները գիմա-  
դրեցին Հռոմայեցոց: «Սրանք այն խալիբներն  
են, որոնք ընկնելով Քսենոփոնի <sup>2)</sup> զօրքերի  
վերայ անհանգստացնում էին և օրոնց մասին  
իւր Anapasis գրքում գրում է այսպէս. «—  
Այդտեղից նրանք (Հելլենները, Քսենափօնի  
զօրքը), անցկացան եօթ անցր և 50 փարսազ  
(1 փարսազ—1 մղոն). և ներս մտան Խալիբ-  
ների երկիրը: Սրանք այն րաջ ցեղերիցն էին  
օրոնց հետ զօրմ ունեցած Հելլենները իրանց  
ճանապարհօրդութեանց ժամանակ: Նրանք  
ձեռնամարտ էին մղում, հագել էին մինչև փո-  
րը հասնող մորթուց կարած կրճկայներ որ  
վերջանում էր պարանի հիւտերով: Ունէին նաև  
սոնապաններ և սագաւարդներ, գտալների մէջ

Ծ. Թ. 1) Խալիբ. Փոքր Հայքի Գայլ գետի հովիտը:  
2) Յոյն գրող, Երերիս IV գար առաջ իւր զօրքով Պարսկաս-  
տանից վերադառնալիս, անցաւ Հայաստանով և նկարագրեց  
իւր Anabasis «մեղրածոր» գրքուս. այս մի կտորը վերցրած  
է այդ զբրէց:



խրել էին Սպարտական սրերի նման կարճ սրեր, որոնցով սրախողով էին անուում ձեռններն բնկած հելլենին, ապա կարծւում գլուխը, անցկացնում նիզակի ծայրին. խաղով ու պարով առաջ էին գնում այնքան որ կարողանան երևալ թշնամուն: Նիզակների երկարութիւնն էր տասնութհինգ յանական արշէին և միայն մի կողմում հագցրած էր սրածայր երկաթ: Նրանք զարան էին մտնում անառիկ դիրքերում, և երբ հիլլենները մտնեում էին, ընկնում էին յետևներից ու սպանում»:

Մինչ զեռ Մարիոսի կողարտները առաջ էին խաղում, տաօխների, մակրօնների և խալիքների երկրներով և անցած ճանապարհին մահ և աւեր էին սփռում, Միհրդատն ու Տիգրանը լսելով այս երկիւղալի լուրը, շտապեցին Վրաստանից դէպի Արտաշատ, անցան Արտաշատում գտնուած, յրարերների միջոցով հաւարած հարեան երկիրների ու տաօխ, խալիպ, մակրօն, զօրքի գլուխը, դիմեցին առաջ սրպէսդի արգելին թշնամու դէպի Արտաշատ, հայոց մայրաքաղաքը առաջանալուն:

Մարիոսի կողարդներին երևում էր արդէն շքապատող լեռների կատարների յետևից հեռու հորիզոնում Արարատ՝ Մասիսի ձիւնափայլ

զագտթը և Արագածի այժմեան Արագեղի սրբածայր կատարը, երբ երկու հակառակորդներ պատահեցին իրար: Հռոմայեցիները նիզակները վահաններին զարնելով պատերազմի նշան տուին:

Մարիոսը ուղղուեց թմարի վերայ: Նրա մեռելային գունատ դէմքի վրայով մի թեթեկարմրութիւն անցաւ, աչքերը վառուեցին կատաղի անհողութեամբ և վայրենութեամբ:

— Ո՞վ Հռոմայեցիք, գոռաց, գառնալով դէպի իր կողարտները— ահա այն հեռու, ձիւնապատ կատարներից, ինչպէս Օլիմպոսի <sup>1)</sup> կատարից, անմահ աստուածները ահանատես պէտք է լինեն մեր կուլին, այնպէս ինչպէս երբեմն Իգալերան <sup>2)</sup> բարձրութիւնից դիտում էին Տրոյացոց և Յունաց կուլին: Եւ ինչպէս որ բաջն Արիլլէսը պատերազմի գաշտի միջով բաշ էր տալիս իւր կառքի յետևից յալթուած Հեկտորի գիտկը, ես էլ իմ նուժինդեան ձիւնս պոշից կապած բաշ պիտի տամ Միհրդատի գիտկը:

Կողարտները պատասխանեցին իրանց ա-

Տ. Թ. <sup>1)</sup> Յունաց ս. ասըը ուր ըստ աստուգելի բնտիւում են աստուածները:

<sup>2)</sup> Իգալ-Տրոյում լեռ. Փոքր Ասիայում:



առջնորդի ճառին, պատերազմական ուրախայի կախինչներսոյ:

— Իսկ էս, զոռաց զարհուրելի Եգիպտոս-հին, ճօճելով նիզակն ու վահանք—ես էլ Բիլ-լոնի <sup>1)</sup> նման պիտի սլանամ պատերազմի դաշտի միջով Տիգրանի դիակը Մաւրիտենական րուսակիս պոչից կապած:

Փողերը հնչեցին: Սրանց պատասխանեց հայոց կանոնաւոր և միւս անկանոն զօրքի խառնիճազանճ վայրի ազազակներով:

Պատերազմի նշանը տարով, Հոռոմայեցիները վրայ արժան, ճօճայնելով իրանց վահաններն ու նիզակները:

— Մահ Միհրդատին, մահ Տիգրանին:

Կօզարտները ճանաչեցին իրանց առաջնորդի պարզ մետաղային ձայնը, որք փոթորիկի նման մտել էր թշնամու շարքերը և մի ծայրից միւսը սլանալով, գետին էր գլորում պատահող թշնամուն գոտայով շարունակ, — մահ Միհրդատին, մահ Տիգրանին:

Մարիտի յետևից մըրթիկի նման սրանում էր ստակալի Եգիպտոսհին, Միգուզայի <sup>2)</sup> գլխի

Ծ. Թ. <sup>1)</sup> Բիլլոն՝ Հոռոմայեցոց պատերազմի աստուածահալին:  
<sup>2)</sup> Զեւս և Դանայի որդի Պերսիտի զուխը կարողը, մի ստակալի ստորերկրեան արարած որի հայեացքը քարայնում է նայողին և մտդերն էլ օձերից են:

օձերի նման, ծածանելով ծամերը օդում:

— Ո՛վ հայրենի Եգիպտոսի աստուածների գոռում էր ջագան իւր խուպտ ձայնով—ցոյց տուէր ինձ Տիգրանի երեսը:

Այսպէս սլանում էին այս երկու սարսափելի ճիւղերները պատերազմի մի ծայրից միւսը, որոնց յետևից սլանում էր արևի տակ փայլփլոց լեզուների արծազրօշք:

Նախապաշարմաներով լի տաօխներն ու մակրօնները շկարզանալով այլ ևս գիմանալ, փախուստի դիմեցին: Նոյն իսկ քաջ խալիբներն էլ զարհուրեցան աեսնելով այս ճիւղին որ համարձակ կերպով սլանում էր կարգերի առաջով: Վերջապէս սրանք ևս չգիմանալով առաջինների օրինակին հետեցին: Հայերը բոլորովին միայնակ մնացին: Միհրդատն ու Տիգրանը մի քանի անգամ ուզեցին իրանց նիզակները սլացող Մարիտի վերայ, քայց ամեն անգամ յետ էին մղւում նշանաւոր Սպարտակի <sup>1)</sup> դպրոցից զուրս եկած քաջ մարդիկ պօշակակրների վահաններով և արծուանիշների կոթերով: Վերջապէս հայերի շարքերն էլ սկսեցին շարժուել: Վախենալով որ մի գուցէ շրջապատուին կօզարդներից, որ արդէն անցել էին

<sup>1)</sup> Նշանաւոր մենամարտող և առաջնորդ:



իրանց թիկունքի կողմը, սիսեցին խառնի խու-  
 աքն յետ նահանջել և սարսափելի կոտորածի  
 ենթարկուել: Բայց երբէք հայերը կենդանի  
 չէին ընկնում թշնամու ձեռքը, մինչև վերջին  
 շունչը գիմարելուց յետոյ ինքնասպանութեան  
 էր դիմում:

— Մահ Միհրգանին, մահ Տիգրանին— գեռ  
 լուում էր այն երկու սոսկալի արարածների  
 անմիտ գոռոցները, որոնք սլանալով, ծածկում  
 էին, արեամբ ներկուած դաշտը պիակներով:

Բայց այս ձայնն էլ շուտով լռեց, իսկ սոս-  
 կալի ձիւօրը գեռ ևս սլանում էր և սլանում  
 ընկած գիակների վրայով: Բայց շուտով նկա-  
 տեցին Հոսմայեցիք որ առաջնորդը սլանում է  
 արիննալի դաշտի միջով, ձեռները ձիւ բաշով  
 գցած և սաղաւարպը ծուռ ընկած:

Ձինորները խօսոյն կանգնեցրին ձիւն, և  
 սարսափով նկատեցին որ իրանց առաջնորդը  
 մեռել է արդէն... Յաղթողը մեռել էր...

Եւ երբ ցած էին բերում ձիւց Մարիոսի  
 գիակը, Եգիպտոսին ողբալով ընկաւ գիակի  
 վերայ ասելով.

Օ՛, Մարիոս, իմ գուշակութիւնը կատար-  
 ւուեց մինչև վերջը... Եթէ անգամ հիպատոս եղար...  
 Ո՛վ մեծ ազգմիկ... Ողբացէք սորա վերայ ով

Հումի և Եգիպտոսի անմահ աստուածներ...  
 ով յախտենակա՛ն աստուածներ...

Պատերազմից առաջ շափազանց շատ գինի  
 խմելուց և պատերազմի գրգռման ու սգեորու-  
 թեանը շղիմանալով— արարուել էր:



9.

**ՄԵՌՆԸ ԵՎ ԹՆԿՆՆ ՄՈՒՏՔԸ**

Իրանց յաղթող— առաջնորդի գիակը, որին  
 արդէն աստուածացրել էին, պարկեցնելով վա-  
 հանների վերայ, ուտերին դրած յաղթական  
 կերպով գուրս տարան պատերազմի դաշտից,  
 տանելով նրա յետեից գերի ընկած տաօխ,  
 խալիբ և ժակթօն բաղմութիւնք:

Նաւատորմի մօտ վերադառնալու ժամանակ  
 անցկացան նոյն ճանապարհով, որով եկել էին  
 նոր աւերածներ անելով և գերելով պատահող  
 կանանց ու երեխաների, որ գերիների բազ-  
 մութեան ներկայութեամբ աւելի շուր աման  
 իրանց սիրելի առաջնորդի փառքին: Համակով  
 նաւատորմին խօսոյն ծովափնից գրանիտ բա-



րերից տաշելով մի գագազ շինեցին և Մարի-  
սի գիակը մէջը դնելով, վերան մարուք ար-  
ցունքի նման մեղր լցրին, զիակը քայքայումից  
ազատ պահելու համար: Այսպէս էին պահում  
հին ազգերը գիակաները, երկար ժամանակ ա-  
ռանց փշանալու: Ինչպէս և Հրէից Հերովտէս  
արքան իւր ձեռքով սպանած ամենասիրելի  
կնոջ Մարիամի գիակը երկար ժամանակ պա-  
հեց մեղրի մէջ առանց վնասուելու:

Ապա զո՞ն մատուցին աստուածներին սրպէս  
յագթութեան մասնակցողների և յաջող նաւա-  
գնացութիւն խնդրեցին:

— Անուան էօլը <sup>1)</sup> ողորմածաբար ուղեցնում  
է մեր առագաստները, ասաց նաւապետը օգ-  
տուէնք նրա սղորմածութիւնից:

— Այստեղ Պանտոսում անմահ նեպտունի <sup>2)</sup>  
եռածանին միշտ էլ հանգիստ չի մնում իւր  
ստորջրեան բնակարանում, նկատեց մի հարիւ-  
րապետ:

— Այն ճիշտ է, աւելյալրեց նաւապետը, մի  
անգամ Բորիոսը <sup>3)</sup> ինձ լաւ գգեց երբ նշա-

Տ. Թ. <sup>1)</sup> էօլը քամու և վերջալուսնի առասպելական օգին,  
<sup>2)</sup> Նիպտուն՝ ծովի աստուածը, Եւպետերի եղբայրը ձեռին  
ունի եռածանի, որով փոխորէի է բարձրացնում ծովի վերայ:  
<sup>3)</sup> Բորիոսը հիւսիսային քամի որին յոյն զիցարանութիւնը  
բնդունել է սրպէս Աստուած:

նաւոր Կիկերօնի հետ գնում էինք Տաւրիպիա  
Ազամեննի ազնուաբարոյ գոտեր հայրենասէր  
Իֆիգինայի տաճարը երկրպագելու:

— Բայց արդէօր, ջրի սլաշարը կբաւակա-  
նանայ, գարձաւ նա իւր օգնականին:

— Մինչև Բոսֆօր և Պրոսպոնտոս (Մտրմարի  
ծովը). կբաւականանայ, պատասխանեց օգնա-  
կանը:

Օգը լցուեց գերի կանանց ու երեխաների  
լաց ու կոծով: Եւ վերջին անգամ սղարով  
մնաս բարև էին անում իրանց հայրենի լեռ-  
ներին: Գնուն ժամանակ...

Աստուածները յաջողութիւն տուին նրանց  
գնացքին, միայն յայտնի չէ ինչո՞ւ, Սցիլլան և  
Խարիբտան <sup>1)</sup> բարկացել էին առաջնորդի գի-  
ակը հայրենիք տանող զինուորներով լի նաւերի  
վերայ: Սրանց բարկութիւնը մեղմացնելու և  
թմնկազին նշխարները ազատելու համար, իւ-  
րաբանչիւր նաւի գերիներից մի մի անմեղ և-  
բեխայ զո՞ն բերուեց կատաղի ծովին:

Միայն ամառային արեւալառ օրերին նաւա-  
տորմը մօտեցաւ հռոմայեցոյ Քրրազան գետի  
պղտոր Տիրերի խառնարանին:

Տ. Թ. <sup>1)</sup> Սցիլլա և Խարիբդա Սիկիլիայ ջրանցքի մօտ մի  
ջրապտույտ տեղ ուր շատ նաւեր են փշանում:



Հոսմայեցիք յբարերի միջոցաւ լսելով նաւա-  
տորմի դարձը, Տիգրանին և Միհրդատին յազ-  
լծողի դիակը բերուելը, իսկոյն սկսեցին պատ-  
րաստութիւններ տեսնել ընդունելու այն մար-  
դու դիակը, որի անունը սարսափ էր տարա-  
ծել ամբողջ աշխարհում որ Սկիպիոնի և Քրակ-  
րեանների քաղաքը՝ Հոսմի փառքը և զօրու-  
թիւնը բարձրացրել էր ամբողջ աշխարհի առաջ։  
Հրապարակներում իսկոյն յազլծական կամար-  
ներ կանգնեցրին որոնք դարդարում էին Տուս-  
կուլումիայի և Տիրերոսի<sup>1)</sup> այգիներից բաղած  
սև սզոյ վարդերով և դափնեայ տերևներով։  
Տաճարները տանազ ճանապարհների մօտ, նրս-  
տարաններ շինուեցան նշանաւոր քաղաքացի-  
ների և ազգեցիկ մատրանների համար։

Վերջապէս հասաւ մեռած յազլծոյի մուտ-  
քի օրը։ Մեռածի յազլծական մուտքը— մի չը  
տեսնուած բան էր Հոսմասի և Հոսմուլտոսի<sup>2)</sup>  
քաղաքների համար։

Վաղ առաւօտեան ամբողջ «սրբազան ճա-  
նապարհը»— via secreta-ն և հրապարակի կողքի  
տարածութիւնը, մինչև Վապիտոլիայի<sup>3)</sup> բար-

ձրունքները, մինչև Տերպեան ժայռերի ստո-  
բառներն ու Իւպետերի տաճարի ազինե, ամ-  
բողջ ճանապարհը սրտեղից պիտի անցնէր  
հանգէսը, լի էր բազմութեամբ, որոնց տիրել  
էր ընդհանուր, համազգային վիշտն ու թախի-  
ծը, Հոսմի այդ մեծ կորստի պատճառով։

Մեռած յազլծոյին ընդառաջ էին գնացել  
Հոսմի բոլոր վարչական մարմինք, Մարիտոսի  
թշնամի Մակրոսը, Վեստար Յինեան, Սերաս-  
րան, արիւամու Լուկուլոսը, երիտասարդ  
Պրատսը, Քէնէոս-Պոպպոսը, Սինատը իւր  
ամբողջ կազմով, Վեստեան կոյսերը սպիտակ  
շորերով, սապիտների գտար իսկ արքունի  
ճարտարապետներն ու նշանաւոր քաղաքացի-  
ների տղաներն ու ազգիկներն ծածկել էին ամ-  
բողջ «սրբազան ճանապարհը» գոյնզգոյն ծա-  
ղիկներով։

Վերջապէս երեաց հանգէսը։ Չորս գեղե-  
ցիկ ձիերով լծուած յազլծական կառքը, կա-  
մաց կամաց առաջ էր շարժուած «սրբազան ու-  
ղիւով»։ Կառքի աջ կողմից, աննական գէմքը  
տիրութեամբ սրբղած, գնում էր հանդուցեալի  
սրգին, Մարիտոս կրտսերը, ձախ կողմից պե-  
տական «բանաջարիւն» որը Հոսմի օրէնքի և  
ժողովրդական սովորութեան համաձայն որ Լ

ճ. թ. 1) Հոսմի շրջակայքում պարակգներ։  
2) Հոսմի հիմնող երկու (տոտասկեական) եղբայրները։  
3) Հոսմի միջնաքերը։



«de mortuis aut pene aut nihil» (մեռածի մասին կամ պէտք լաւ ասել կամ ոչինչ), խորին լուսթիւն էր պատել:

—Ո՛վ մեծ առաւածներ, լուում էր ճանապարհի ամեն կողմից: Իսկ թէ ինչո՞ւ յայտնի չէր—յազժական ոսկէզօծ կառքի մէջ նըստեցրել էին... մեռածին: Գափնեայ պոսկներով զարգարուած գլուխը ընկել էր կառքի յետի մասի վերայ: Ոսկեայ սպիտակ պատմուճտնը ծածկել էր նրա նիհար անճանաչելի դէմքը, որը կարծես նոր վտանգ էր սպառնում հռոմին, իւր Գարժագինեայ արտարաման և անպատուութեան վրէժն առնելու համար:

Բայց աւելի ևս սարսափ էր ազգում հանգիտականները վերայ այն ճիւղի դէմքը, որը կանգնել էր մեռածի յետը և բշում էր կառքը:

—Օ՛ մեծդ Գրողերպենա <sup>1)</sup> լուուց մի հառաչանք վերստեան կոյսերի շարքերից.— սա հաւանական է Տարտարոսի ջաղուներից պէտք է լինի, և ինչ էլ սարսափելի է:

—Գա Սիրիլյան Եգիպտուհին է, որը գուշակել էր հանդուցեալի համար, որ եօթն ան-

գամ հիւպատոս պիտի լինի և ուղիղ էլ կատարուեց, թաց երիտասարդ Գոմպէտը:— Իզուր մի վախնայ մեծ վետայի <sup>1)</sup> քրմուհի:

—Այս սարսափելի նեռը, միշտ ուղեկցում էր Մարիտի բոլոր կախներին ու արշաւանընդին, աւելացրեց պատանի Գրաստոր, հրճուելով և ափսոսալով որ այդպիսի մի կոյս, մի գեղեցկութիւն ու շքնապ ծագիկը պիտի թողնի աստուածուհու տաճարում:

Այն ինչ կարծես սարսափելի Եգիպտուհին ոչորի վերայ չէր նայում. նրա հայեացքը վառուում էր վայրի կատաղութեամբ, կարծես տեսնում էր հեռում, մի ինչ որ աննշմարելի բան իւր հայրենի Եգիպտոսը, սրբազան Նեղոսով, յաւերժական հոկայ բուրդերով, որոնք այլևս չէր տեսնելու բնաւ:

Յաղթական կառքի յետևից, կօգարաներով շրջապատուած առաջ էին շարժուում գերիների շարքերը, որոնք աննկարագրելի և սարսափելի զարմանքով նայում էին այս արարողութիւններին, որոնք իրանց լեռներում եղած ժամանակ, մտքերից անգամ չէին անցկացնում: Նորա յիշում էին իրանց կորցրած հայրենիքի հսկայ լեռներն ու ժայռերը, որոնց տեսնելը այլ ևս

<sup>1)</sup> Վեստա՝ տան օջախի աստուածուհի:



վիճակուած չէր իրանց: Չարմանքով լի վայրի հաշեացքրնէրով, գիտում էին բոյարովին անծա-  
փօթ գէմբերին, շքեղ պալատներին, տաճար-  
ներին և ընդարձակ փողոցներին:

— Ի՞նչ մեծ հոգի թաւ հոռովց. ասաց Յիննան տխուրութեամբ հայեյով մեռածի գէմ-  
բին:

— Իսկ գիտես արդէ՞ք, քանի հազար հոգի, այդ մեծահոգին ճարտարասի բաժին ուղարկեց, պատասխանեց երկաթեայ հոռմի բարե-  
սիրտ գաւակ Սերտրեան, գլուխը թափահա-  
րելով:

— Այո, այդ տեսակ գործերը, մեծերին յա-  
տուկ մի երևոյթ է, նկատեց այնտեղ կանգ-  
նած մաւրապէմ Սուլթանը, յիշելով իր ճարտա-  
րոս ուղարկած հոգիների թիւը, սրտնք այնտեղ  
անհամբերութեամբ սպասում էին իրան:

Ճարպէյիան ժառերից մի քիչ հեռու, ար-  
գէն ամեն ինչ պատրաստ էր գիտիլ այրելու  
համար: Այնտեղ կանգնեցրած թաղման խարոյ-  
կը սեղանի ձեով բարձրացրած մայրի ծառե-  
րից: Խարոյկի շուրջը կիսաշրջանաձև կանգնել  
էին Ինգիդի <sup>1)</sup> քուրմերը սպիտակ շորերով

Ծ.) Թ. 1) Ինգիդա՝ եզիպտացոց գիտութեան աստուածուհին է որ մտել է հոռմում որպէս երկրագործութեան աստուածուհի:

ձեռներին հայարոյսերի փունջ բռնած: Խա-  
րոյկի մօտ պակաս էր միայն Մարիստի նախ-  
նիրների պատկերները, որ ըստ սովորութեան  
պէտք է այնտեղ լինէր, բայց սրովհետև և  
յայտնի չէին նրա նախնիրները, ուստի և չը  
կային: Քուրմերից մի քիչ հեռու կանգնել էին  
լացկանները սպոյ հագուստով ապա ջահակիր-  
ները իրանց առանձին շորերով և վառուած  
ջահերով:


Տէնց որ յաղթական կառքը կանգ առա-  
ւուագ քրմապետը հանդիսաւոր կերպով գլմեց  
գէպի կառքը. նրան հետեցին քուրմերը և ջա-  
հակիրների խումբը:

Հեռուից յսուեց մեզմ և տխուր թաղման  
մեղեգին, որին խառնուեց նաև լացկանների  
ողբն ու կականը:

Իգիդայի քրմապետի նշանի համաձայն,  
կառքից ցած բերին գիտիլ, և հանդիսաւոր  
կերպով պարկեցքին խարոյկի վերայ ամ մեծ  
հոռմայեցու մարմինը, որ իւր յաղթութիւննե-  
րով փառաւորեց հոռմի փառքը և անկողնա-  
ցրեց իւր անունը:

Եզիպտուհին, յուռ, անձայն կանգնել էր  
խարոյկի մօտ արձանի նման:

Իգիդայի քրմապետի նշանով մօտ եկան ջա-





կիրնների խումբը և կրակ տուին խարոյկը որև  
խսկոյն բոցավառուեց և հսկայական աշտարա-  
կի ձև ստացաւ:

Յանկարծ լսուեց գերիւնների լացն ու կա-  
կանը. խառնուեց լացեանների ողբի հետ, այն-  
պէս որ կարծես ամբողջ Հռոմի ողբն էր որ  
հասնում էր երկիւնք. բոզորելու Հռոմի և նը-  
րանց կողմից, որոնց նա որր էր թողել իւր  
կենդանութեան ժամանակ:

Մի սոսկայի գերմարդկային ճիշ արձակե-  
լով, Եգիպտոսիին ընկաւ Մարիոսի կիսախանձ  
զիակի վերայ, այրուելով նրա հետ, խառնե-  
լով իւր մարմնի մոխիրը, Մարիոսի մոխիր  
դարձած մարմնի հետ:





ԱՄ Հայագիտական գրադարան



MAL008658



